Սյունիքի մարզ, Խնածախի միջնակարգ դպրոց

Ձեռագործության խմբակի ծրագիր

V-XII դասարաններ

(Շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ)

Խմբավար՝ Տաթևիկ Թադևոսյան

Բացատրագիր

Ձեռագործության խմբակում նախատեսված է ներառել 5-12-րդ դասարանների աշակերտներին: Այն ուղղված է սովորողների մոտ գործելու, կարելու հմտությունների զարգացմանը: Նախատեսվում է խմբակի շրջանակներում զարգացնել նաև աշակերտների ձեռնարկատիրական հմտությունները, այսինքն պատրաստի արտադրանքը կարողանալ իրացնել՝ հոբբին դարձնելով բիզնես՝ դրանով ապահովելով նաև խմբակի հետագա գործունեությունը:

Ծրագրի նպատակը

1. Ներկայացնել գործելու և կարելու եղանակները
2. Երեխաների մոտ ձևավորել և զարգացնել կարելու և գործելու ստեղծագործական հմտություններ
3. Զարգացնել ճաշակ և բիզնես մտածողություն
4. Նպաստել անձնային աճին և սոցիալական վարքի ձևավորմանը
5. Հաղորդակից դարձնել ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, արժևորել ազգային արհեստի տեսակները

Խնդիրներ

1. Ծանոթացնել կարելու և գործելու տեխնիկային
2. Ծանոթացնել կարի մեքենայով աշխատելու կանոններին
3. Ծանոթացնել ազգային մշակույթի տարրերին

Վերջնարդյունքները

Խմբակի անդամները կկարողանան

1. Նախագծել, էսքիզավորել և գործել կարպետի տարբեր տեսակներ
2. Աշխատել կարի մեքենայով
3. Ձևել և կարել կենցաղում, առօրյա կյանքում օգտագործվող տարբեր իրեր
4. Գործել առօրյայում օգտագործվող իրեր
5. Ներկայացնել պատրաստված իրերի ցուցադրություն՝ կազմակերպելով ցուցահանդես-վաճառքներ

Բովանդակությունը

Կարպետ (35 ժամ)
Նպատակը
Սովորեցնել կարպետի տեսակները և գործելու հմտությունները
Խնդիրները
• Ծանոթացնել կարպետ գործելու տեխնիկային, կարպետագործության գաղտնիքներին: • Ծանոթացնել կարպետագործության մեջ կիրառվող հայկական զարդանախշերին:
Վերջնարդյունքները
• Կիմանա կարպետ գործելու տեխնիկան՝ տարբերակելով կարպետի տեսակները: • Կկարողանա գծագրել և գործել զարդանախշեր:
Բովանդակությունը
1. Պատմական ակնարկ կարպետի մասին (1 ժամ) 2. Կարպետի տեսակները, կարպետ գործելու թելերը և սարքերը (1 ժամ) 3. Կարպետի հենքը, հենքի տեսակները՝ լայն և նեղ (2 ժամ) 4. Կարպետի սկզբնամասի պաշտպանիչ փականաշարը՝ հասկ (2 ժամ) 5. Կարպետի պարզագույն նախշերի քարտեզագրում (2 ժամ) 6. Կարպետի բարդ նախշերի քարտեզագրում (2 ժամ) 7. Քարտեզի վանդակների և հենքի թելերի համապատասխանեցումը, մասշտաբի որոշում (2 ժամ) 8. Բուն կարպետի գործելու տեխնիկան (2 ժամ) 9. Կարպետի փակում և կտրում (2 ժամ) 10. Տարածված վրիպակները կարպետագործության մեջ (1 ժամ) 11. Նոր թել ներմուծելու տեխնիկան (1 ժամ) 12. Նախշի համաչափությունը (2 ժամ) 13. Պարզ նախշերով գործել կարպետներ (5 ժամ) 14. Զարդանախշերը հայկական կարպետում (2 ժամ) 15. Բարդ նախշերով գործել կարպետներ (5 ժամ) 16. Պասրզ և բարդ նախշերով էսքիզավորել կարպետ (3 ժամ)
Հելյունագործություն (11 ժամ)
Խաղալիքներ, գլխարկ, բաժակի և ծաղկամանի տակդիր գործելու տեխնիկան
Նպատակը
Սովորեցնել գլխարկ, խաղալիք և տակդիր գործելու հմտությունները
Խնդիրները
Ծանոթացնել գործելու եղանակներին և տարբեր նախշերին
Վերջնարդյունքը
Կկարողանան տարբեր նախշերով իրեր գործել
Բովանդակությունը
1. Գլխարկի ռեզին գործելու ձևեր (1 ժամ) 2. Գլխարկ գործելու տարբեր նախշեր (2 ժամ) 3. Գործել գլխարկ (1 ժամ)

4. Խաղալիք արջուկ և նապաստակ գործելու տեխնիկա՝ գլուխ, ականջ (1 ժամ)
5. Արջուկ և նապաստակ գործելու տեխնիկա՝ ձեռքեր, ոտքեր, իրան (2 ժամ)
6. Գործել արջուկ և նապաստակ (1 ժամ)
7. Տակդիր գործելու նախշեր (1 ժամ)
8. Կլոր, քառակուսի և օվալաձև տակդիրներ գործելու նրբություններ (1 ժամ)
9. Գործել բաժակի և ծաղկամանի տակդիրներ (1 ժամ)

Կարուձև (12 ժամ)

Սրբիչ, բռնիչ, գոգնոց, էկո պայուսակ կարել

Նպատակը

- Սովորեցնել կարվածքի տեսակները, աշխատել կարի մեքենայով,
- Սովորել նախագծել և մոդելավորել տարբեր իրեր,
- Ուսուցանել սրբիչի, բռնիչի, գոգնոցի և էկո պայուսակի պատրաստման հմտությունները;

Խնդիրները

- Զնավորել կարի մեքենայով աշխատելու հմտություններ,
- Ծանոթանալ տարբեր իրերի նախագծման և մոդելավորման գործառույթներին:

Վերջնարդյունքը

- Կիմանա կարատեսակները և գծագրի կառուցման քայլարշավը,
- Կկարողանա կարել կարի մեքենայով,
- Կկարողանա կարվածքներն իրար միացնել;

Բովանդակությունը

1. Սրբիչի ձևում և կարում (2 ժամ)
2. Բռնիչի ձևում և կարում (2 ժամ)
3. Գոգնոցի գծագրի կառուցում (1 ժամ)
4. Գոգնոց ձևելու հաջորդական քայլերը (1 ժամ)
5. Գոգնոցի մոդելավորում և կարում (2 ժամ)
6. Էկո պայուսակի ձևում և կարում (2 ժամ)
7. Էկո պայուսակի վրա նկարել (1 ժամ)
8. Էկո պայուսակի վրա ասեղնագործել (2 ժամ)

Շյուղագործություն (10 ժամ)

Գուլպա, գլխարկ գործել

Նպատակը

- Սովորեցնել գուլպա և գլխարկ գործելու հմտություններ
- Սովորեցնել շյուղագործության տարբեր նախշեր

Խնդիրները

Ծանոթանալ գուլպա և գլխարկ գործելու տեխնիկային

Վերջնարդյունքը

- Կկարողանա գործել շյուղերով
- Կկարողանա տարբեր նախշերով գուլպա և գլխարկ գործել

Բովանդակությունը

1. Աջ և ձախ գործելու տեխնիկան (1 ժամ)
2. Ռեգին գործելու տեխնիկան՝ սովորական և անգլիական (2 ժամ)
3. Գործել պարզ նախշեր (1 ժամ)
4. Գուլպա գործելու տեխնիկան (2 ժամ)

5. Գլխարկ գործելու տեխնիկան (2 ժամ)
6. Գործել գլխարկ և գուլպա (2 ժամ)